Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1323-20.04.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 54-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «15» թիվը փոխարինել «14» թվով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 91-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «15» թիվը փոխարինել «14» թվով:

Հոդված 5. Օրենսգրքի 106-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Սույն օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 107-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.

«4.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը։»:

2) 8-րդ մասում «քսան» բառը փոխարինել «14» թվով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում

Կ-1323-20.04.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ~~ՀՀ~~ քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-~~րդ~~ ին մասով.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 54-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «15» թիվը փոխարինել «14» թվով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 91-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4~~3~~. Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «15» թիվը փոխարինել «14» թվով:

Հոդված 5~~4~~. Օրենսգրքի 106-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-~~րդ~~ ին մասով.

«3.1. Սույն օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժի միջոցները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

Հոդված ~~5~~6. Օրենսգրքի 107-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-~~րդ~~ ին մաս.

«4.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները կիրառելիս արգելվում է դատապարտյալի մերձավոր ազգականների հետ հաղորդակցության ազատության սահմանափակումը:»:

2) 8-րդ մասում «քսան» բառը փոխարինել «14» թվով:

Հոդված 7~~6~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1323-20.04.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին, 5-րդ և 6-րդ հոդվածներ**	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «2.1-րդ» գրելաձևը, 4-րդ հոդվածում «3.1-րդ» գրելաձևը, 5-րդ հոդվածում «4.1-րդ» գրելաձևը փոխարինել համապատասխանաբար «2.1-ին», «3.1-ին», «4.1-ին» գրելաձևերով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով և**	Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և Հայաստանի Հանրապետության կողմից	Ընդունվել է:	Ընդունվել է:

		համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը	վավերացված միջազգային հանրաճանաչ փաստաթղթերը հռչակում են խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի բացարձակ արգելքը, ազատությունից զրկված անձանց մարդասիրական վերաբերմունքի իրավունքը: Նշված չափանիշներին համաձայն և ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ նախատեսվել է հիվանդության հիմքով հարկադրանքի միջոցը փոխելու կամ վերացնելու հնարավորություն, որը խարսխված է այն գաղափարի վրա, որ ազատությունից զրկված անձի մոտ առկա ծանր հիվանդությունը բուժելու կամ խնամքն ապահովելու անհնարինության դեպքում պետությունը պետք է հնարավորինս ապահովի ազատությունից զրկված անձանց խնամքը ազատազրկման վայրից դուրս կազմակերպելու, ազգականների կողմից խնամվելու և արժանապատիվ մահանալու հնարավորությունը: Այսպես՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու		

			մասին» օրենքով կարգավորվել են ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում ծագող հարաբերությունները, և նախատեսվել է, որ կալանավորման կատարումը խոչընդոտող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն իր հերթին սահմանում է դատապարտյալին հիվանդության հետևանքով պատժից ազատելու կարգը, սակայն չի նշում, թե ինչ իրավական ակտով է սահմանվում պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը: Միաժամանակ, հարկ է նշել, որ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ, որի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի հիշյալ լիազորող նորմը, մինչդեռ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում բացակայում է համանման		

			հարաբերությունները կարգավորող լիազորող նորմը: Հետևաբար՝ նշված ոլորտում առկա է օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն՝ գործող օրենսդրությամբ համապատասխան լիազորող նորմ նախատեսելու միջոցով: Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկում ենք Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենսգրքի 91-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով. «9. Պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նաև **համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը:**		